# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2025 թվականի N 1383-Ն

## ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՆԿԱՐԱԳՐԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Զբոսաշրջության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման տեխնիկական պահանջները և նկարագրերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման չափանիշները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման վկայականի ժամկետը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման վկայականի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» N 946-Ն որոշումը:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը որակավորված հյուրանոցային տնտեսության օբյեկտներին տրամադրված որակավորման վկայականը շարունակում է գործել մինչև դրանցում նշված որակավորման ժամկետի գործողության ավարտը կամ մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը՝ որակավորված անձի դիմումի հիման վրա որակավորման վկայականի գործողությունը դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության կոմիտեի նախագահի որոշումն ուժի մեջ մտնելը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

26.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ